

«ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 11-ի № 113-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 11-ի «**Օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ցանկը սահմանելու մասին**» N 113-Ն որոշմամբ սահմանված հավելվածը 89-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 90-րդ կետով.

«

90. արհեստական երիկամի հեմոդիալիզի սարքեր

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: